

անտարակոյս Ս. Գլխազիրը Ե. դարուն կը պայծառանան եւ Հայոց համար կ'ըլլան սկիզբը Ս. Յակոբեանց վանական բոլոր հաստատութեանց այն թաղին մէջ, ուր ապա հաստատուեցաւ հայկական գաղութ մը, որուն սկզբնական բարգաւաճանքը առաջին Սաչափորներէն յառաջ եղած է, Գրիգոր Վկայասէրի ժամանակ: Այս գաղութը մեր գրիչներէն զատ կը յիշեն նաեւ արեւմտեանք. եւ Ասաիզն Երուսաղեմի, որ ցոյց կու տան թէ Հայք հոն բազմաթիւ էին. եւ ԺԲ. դարու կիսուն հիւրանոցներ ունէին և իրենց անունով ամբողջ թաղ մը, *Ruga Armenorum*, որ 1222ին կը յիշուի դիւանական գրուածոց մէջ (*Տե՛ս Սիրուան*, էջ 482):

Ս. Մինասի մատրան կիցը կը գտնուի Ս. Մակարի *մասուռը*, որուն արեւելակողմն է սեղանը, և հիւսիսակողմը Ս. Մակարի գերեզմանը: Յատուկը երկու մէթը երկայն ու լայն է. գերեզմանաքարը սպիտակ մարմար է, շինուած 1751ին Եազուպ Ամիրային ծախքով: Մակարի գերեզմանին վրայ կը գտնուի նոյն հայրապետի մահուան հնօրեայ պատկեր մը 1731 թուականաւ: Այս մատուռը Մակարէ զատ Ս. Լուսաւորչի պատուոյն ալ յատկացուած կը նկատուի իբր թէ նախապէս այստեղ կը պահուի եւ դեր Լուսաւորչի նշանաւոր մասունքը: Այս մատրան գուրան է Գլխաշիրի *ասեանը*: Մատուռին պատերն ու կամարածև առաստաղը չիկնիով պատած է: Ս. Մակարի սատափեայ գուռը շինած է Տէր Մինաս:

Գլխազիրի գասին անկիւնը դրուած պատրիարքական աթոռին քովէն նեղ դուռէ մը, իրբր 30 ոտք նեղ ու փայտեայ սանդուխ մը կը տանի տաճարին հարակողմին վերի մատուռները, որոնց կ'երթացուի Վերնատունէն ալ կամրջակերպ անցքով մը: Առաջին մատուռը կը կոչուի Ս. Նշան, իբր թէ այստեղ կը պահուէր երբեմն Սաչափայտի մեծ մասունքը, որ արուեստակերտ պատուանդանով մասնատուփ մը ունի: Իսկ Սաչափայտի մասունքը ստացուեր է հին ժամանակներէ յոյն պատրիարքէ մը որ իսլամութեան յարեր է և մասունքը վաճառեր է Հայոց պատրիարքին: Այս պատմութեան մէկ տարբերակը կը պատմէ Զուար ձիյէրճի Օղլու քահանան և իր Ուղեգրութեան մէջ և կը գրէ թէ (սնդ, 1867, 203-204) Կիրիտի առման ժամանակ յոյն լուսարարը Կենաց Փայտը հետը կ'առնու ու կը բերէ Երուսաղէմ. կը զիմէ Յու-